Հայ գրականության օլիմպիադայի հարցաշարեր
Մարզային փուլ (2023-2024 ուստարի)
(տևողությունը՝ 180 րոպե)
10-րդ դասարան

1.Գրիգոր Նարեկացին և Հայաստանի վերածնունդը։ «Մատյան ողբերգության» պոեմի քո՛ ընկալումը։ Պարույր Սևակի գնահատականը «Մատյանին»։ Ի՞նչ շրջասույթներ գիտես Նարեկացու մասին։ Կարո՞ղ ես ինքդ գրել որևէ շրջասույթ։ 5 մ.

2. Ի՞նչ է հայրենը որպես բանաստեղծական տեսակ։Վերլուծի՛ր Նահապետ Քուչակի հետևյալ հայրենները.

1. Ես այն հավերուն էի, որ գետինն կուտ չուտեի,
Թռչ՝ ի երկնոքն երթ՝ ի, թե սիրո ակնատն չընկնեի,
Ակնատն ի ծովուն միջին էր լարած՝ ու ես չգիտեի,
Ամեն հավ ոտոքն ընկներ, ես ոտոքս ու թեւս ավելի։

2. Ուր էիր, ուսկից եկիր, անծանոթ, ըզիս սիրեցիր.
Կրակն ի թեզնիքդ ուն՝ իր, ի ծոցիկս ի վար թափեցիր.
Քու սերդ ալ ոսկի արիր, իմ սրտիս քուրան հալեցիր,
Դարձար զան հալխա արիր՝ ու իմ սրտիս ականջն անցուցիր։

5 մ.

3. Պատմի՛ր Սայաթ-Նովայի մասին՝ ելնելով իր իսկ խաղերից՝ ինքնակենսագրական, սիրային, սոցիալական, խոհափիլիսոփայական (հուշում՝ Սայաթ-Նովու վաթանիցըն հարց կու տան, Արթար դատե, չէ վուր թաքավուր իս դուն, Թամամ աշխարհ…, Դուն էն գըլխեն և այլն)։ 5 մ.

4. Ինչպե՞ս ես հասկանում Աբովյանի «ռուսասիրությունը». մեկնաբանի՛ր՝ «Օրհնվի էն սհաթը, երբ ռուսի օրհնյալ ոտը հայոց լիս աշխարհը մտավ և ոգլբաշի չար շունչը մեր երկրիցը հալածեց»։
Իսկ այսո՞ր ինչ ընկալում ունես։ 5 մ.

Հաջողությո՛ւն, սիրելի մասնակից։

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան